12 նոյեմբերի 2015 թվականի N 1306 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N 1290-Ն ԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի N 211-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 13-ի «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (Պոլիտեխնիկ)» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի վերակազմավորելու և գույք տրամադրելու մասին» N 1290-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) N 2 հավելվածի 17-րդ կետի 6-րդ պարբերության 12-րդ սյունակում «քանդման ենթակա» բառերը փոխարինել «լավ» բառով.

2) N 3 հավելվածի 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
«Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (Պոլիտեխնիկ)» պետական ոչ առևտրային կազմակերպության Վանաձորի մասնաճյուղ												
18.	քաղ. Վանաձոր, Շինարարների 12	մասնաշենք	1975 թ.	1975 թ.	139563	346255.80	207753.48	138502.32		9.2	մասնակի հիմնանորոգված կամ վթարային՝ հիմնանորոգման և քանդման ենթակա շինություններ	

		արհեստանոց	1990 թ.	1990 թ.	269	1671	1671	0			լավ	
		ավտոտնակ	1990 թ.	1990 թ.	133.4	1482.7	1482.7	0			լավ	
		կիսակառույց շինություն			2000	1080	1080	0			նորոգման ենթակա	
		էլ. ենթակայան 1	1975 թ.	1975 թ.	40.5	561.5	561.5	0			անավարտ շինություն	
		էլ. ենթակայան 2	1975 թ.	1975 թ.	40.5	561.5	561.1	0			լավ	

»:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 5-ի «Պետական գույքի ապամոնտաժման թույլտվություն տալու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 13-ի N 1290-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 211-Ն որոշման 1-ին կետից հանել «և 173.2 քառ. մետր մակերեսով արհեստանոցի» բառերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ